



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐՄԱՏԱԿՐԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«16» 08 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 74

Ձեռնարկողը՝

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնս» ՍՊԸ

ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

«Ազարակ փ.կ.-ի և 110/35/6 կՎ Ազարակ ենթակայանի
միջև կապ 110կՎ նոր օդային գծի կառուցում»
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկարգություն

«Սյունիքի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Սահակյան

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 5թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 74

<16> 08 2017թ.

Handwritten signatures and initials in blue ink.

**<<Ազարակ փ.կ.-ի և 110/35/6 կՎ Ազարակ ենթակայանի միջև կապ
110 կՎ նոր օդային գծի կառուցում>> աշխատանքային նախագծի
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

Տեղադրման վայրը՝

<< ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/Բ կատեգորիա/
<< Սյունիքի մարզ,
Մեղրի համայնք



Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է << Սյունիքի մարզում, Մեղրի համայնքի վարչական սահմանում : Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ համակարգի աշխատանքի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի շրջանակներում "Բարձրավոլտ էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ կողմից նախատեսված է Իրականացվող գործունեության նպատակն է՝ Ազարակ 220 կՎ փոխակերպման կետում տեղադրել 220/110 կՎ ավտոտրանսֆորմատոր: Ուրվակների էլեկտրամատակարարման համակարգի հուսալիության բարձրացման, ինչպես նաև Չանգեզուր և Կապան 110 կՎ օդային գծերի բեռնաթափման նպատակով նախատեսվում է կառուցել նոր 110 կՎ օդային գիծ՝ Ազարակ փոխակերպման կետի և Ազարակ 110/35/6 կՎ ենթակայանի միջև: Նախագծվող ՕԳ-ի երկարությունը 1464 մ է, այն կառուցվելու է Կարճևան բնակավայրի վարչական սահմաններում: Ուղեգծի սկիզբը՝ (ՊԿ0+00) "Ազարակ-1" 110/35/6 կՎ ԵԿ-ի գոյություն ունեցող 110 կՎ մուտքի պորտալն է ուղեգծի վերջը՝ Ազարակ փ.կ-ում տեղադրվող 110 կՎ պորտալը (ՊԿ14+64): Ուղեգծի երկայնքով կատարվել է ճարտարաերկրաբանական հետախուզում, համաձայն որի արդյունքների՝ տեղամասի գրունտը ժայռային է:

Նախատեսվող գործունեության տարածքում անտառածածկույթը բացակայում է, բուսականությունը հիմնականում ներկայացված է կիսաանապատային և քարքարոտ

վայրերի տեսակներով: Դիտարկվող տարածքը ամենամոտ բնապահպանական տարածքից /“Արևիկ” ազգային պարկ/ գտնվում է մոտ 1.3 կմ հեռավորության վրա:

Էլեկտրամատակարարման օդային գծի կառուցումը համաձայնեցված է՝ Կարճևանի բնակավայրի ղեկավարի, համապատասխան կառույցների և սեփականատերերի հետ, որոնց տարածքով անցնելու է Էլեկտրամատակարարման գծի մի մասը /համապատասխան համաձայնեցումներն առկա են նախագծային փաթեթում/:

“Ագարակ-1” ԵԿ-ի մոտ, խիստ նեղվածքային պայմաններից ելնելով, հաղորդալարերի միացումը նախատեսված է դրա դիմաց գոյություն ունեցող N1 Y110-1+9 տիպի միջանկյալ հենարանի միջոցով, ընդ որում, շլեյֆների միացումների համար N1 և N1 հենարանների վրա նախատեսված է լրացուցիչ լայնակների տեղադրում: Օդային գծի հաղորդալարն ընդունված է AC240/39 տիպի:

Ուղեգծում նախատեսված է 110 կՎ 7 հատ նոր, միաշղթա հենարանի տեղադրում, որոնց թվում՝

- 5 հատ Y110 տիպի անկյունային հենարաններ
- 2 հատ Ո110 տիպի միջանկյալ հենարաններ:

220 կՎ ՕԳ-ի տակով անցումն իրականացվում է N7 YC110-3 տիպի խարսխային և N8 Y110-1+9 տիպի միջանկյալ հենարանների միջոցով: 35 կՎ ՕԳ-ի վրայից 110 կՎ ՕԳ-ի անցումը իրականացնելու համար, նախատեսված է ապամոնտաժել 35 կՎ ՕԳ-ի շանթապաշտպան ճոպանը՝ 35 կՎ ՕԳ-ի NN1-3 խարսխային հենարանների հատվածում:

Նախագծով նախատեսված է գոյություն ունեցող 6 կՎ ՕԳ-ի վերակառուցումը գոյություն ունեցող NN1-3 հենարանների հատվածում, որը պայմանավորված է նախագծվող 110 կՎ ՕԳ-ի N3 հենարանի տեղադրման հետ (քանի որ N3 հենարանի տեղադրման տեղից 7 մ հեռավորության վրա առկա են վերգետնյա ջրագծեր, հետևաբար անվտանգության գոտու ապահովման համար անհրաժեշտ է վերակառուցել 6 կՎ օդային գծի հատվածը): Հիմքերի տակ նախատեսված է խճային հիմնատակի պատրաստում 100 մմ հաստության շերտով: Շանթապաշտպան ճոպանի ձգող ամրացումները կլինեն մեկուսացված PCB70A տիպի 1-ական մեկուսիչներով, իսկ պահող ամրացումները՝ ոչ մեկուսացված:

Աշխատանքային նախագծով նախատեսված է՝ գրունտի տեղափոխման միջոցով գոյություն ունեցող գրունտային ճանապարհի հարթեցում՝ 630 մ հատվածի վրա և ճանապարհի շրջադարձերի լայնացում, ինչպես նաև 400 մ երկարությամբ նոր գրունտային ճանապարհի կառուցում՝ նախագծային N2 Y110-1 տիպի հենարանի տեղադրման և գոյություն ունեցող Y110-3 տիպի հենարանի ապամոնտաժման համար:

Հենարանների հիմքերի փոստրակների փորման արդյունքում առաջացած ժայռային գրունտը կուտակվելու է անմիջապես հարևանությամբ, հիմքերի տեղադրումից հետո օգտագործվելու է որպես լցանյութ փոստրակների հետ լցման, հարթեցման և ռեկուլտիվացման համար:

Գոյություն ունեցող 630 մ երկարությամբ գրունտային ճանապարհի հարթեցման և շրջադարձերի լայնեցման աշխատանքները հիմնականում իրականացվելու են գործող ճանապարհի մակերեսով: Այդ աշխատանքների մշակվող գրունտի ծավալը կկազմի 120 մ³,

իսկ առաջացող բերրի հողը կկազմի՝ 20 մ³: 400 մ երկարությամբ նոր մոտեցման ճանապարհի կառուցման ընթացքում հողային աշխատանքների ընթացքում մշակվող՝ 809 մ³ ծավալով գրունտային զանգվածի դեպքում բերրի հողը /որի ծավալը կկազմի 135 մ³/ Մեղրի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված կտրամադրվի Ագարակ բնակավայրի ազդեցության ենթակա հողամասերի սեփականատերերին:


Նախատեսվող գործունեության իրականացման համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակների վերլուծություն, ընտրված տարբերակը հիմնավորվել է՝ ելնելով բնապահպանական և տեխնիկական անվտանգության նպատակահարմարության տեսանկյունից:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմում է 25 աշխատանքային օր: Օդային գծի կառուցման աշխատանքները իրականացվելու են 3 փուլով: Շինարարության ընթացքում օգտագործվող տեխնիկական միջոցներն են՝ ավտոկոունկ, ինքնաթափ մեքենա, ամբարձիչ և էքսկավատոր: Շինարարության փուլում կիրառվող նյութերի, տեխնիկական միջոցների, աշխատուժի, աշխատանքների իրականացման ժամանակացույցի, ելքային բնապահպանական տեղեկատվության և այլ ցուցանիշների վերլուծության արդյունքում ՇՄԱԳ հաշվետվությունում կանխատեսվել և գնահատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանը և նախատեսվել են ազդեցությունների նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում),
- հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական տեխնիկական և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները: Հաշվետվությունում իրականացվել են մթնոլորտային օդի արտանետումների հաշվարկներ, որոնք առաջանում են հողային/փորման աշխատանքներից և գրունտի տեղափոխման արդյունքում՝ փոշու ձևով և դիզելային վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի աշխատանքից՝ գազանման արտանետումների ձևով: Ընդամենը երեք փուլերի համար վնասակար արտանետումների քանակական ցուցանիշները շին ժամանակահատվածի համար կկազմեն՝ փոշի 0.513 տ, կամ 2.417 գ/վրկ, ածխածնի օքսիդ՝ 0.1707 տ/տարի, կամ 0.5984 գ/վրկ, ազոտի օքսիդներ 0.083 կամ 0.290, CH (ածխաջրածիններ)՝ 0.0166 տ/տարի, կամ 0.0608 գ/վրկ, ՊՄ (պինդ մասնիկներ) 0.0085տ/տարի, կամ 0.0296 գ/վրկ, SO₂. 0.0108 տ/տարի, կամ 0.049 գ/վրկ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մթնոլորտային արտանետումները չնչին են (էլեկտրամատակարարման գծի կառուցման ժամանակահատվածում վնասակար նյութերի



արտանետումների գումարային ծավալը կկազմի 0.8026 տ) և էական ազդեցություն/աղտոտում չեն ունենա շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ջրցանի համար պահանջվող ջրի ծախսը կկազմի՝ 15 մ³, կամ 0.75 մ³/օր, իսկ աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջը կկազմի՝ 12.275 մ³/ կամ 0.491 մ³/օր: Էլեկտրամատակարարման օդային գծի հենարանների կառուցման ընթացքում առաջացող մոտ 0.23 տ քանակությամբ գրունտը սահմանված կարգով կտեղափոխվի և կտեղադրվի համայնքի աղբավայր Մեղրի համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված:

Շինարարության ընթացքում առաջացող այլ թափոնները՝ սև մետաղի ջարդոնի այլումինե և պղնձե մալուխների/հաղորդալարերի մնացորդների տեսքով, աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն "ՀԷՑ" ՓԲԸ Մարտունու էներգացանցի պահեստ՝ այլ տեղամասերում նորոգման աշխատանքներում օգտագործելու նպատակով կամ թափոնների մշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերություններին իրացնելու համար:

Շինարարության ընթացքում կիրառվող նյութերը մատակարարվելու են "ՀԷՑ" ՓԲԸ Տաթև մասնաճյուղի "Մեղրի" էներգացանցի պահեստից, անմիջապես օգտագործումից առաջ: Նախատեսվող գործունեության տարածքում բոլոր հեղուկ նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերից խուսափելու համար:

ՇՄԱԳ հաշվետվությունում իրականացվել են հաշվարկներ նախատեսվող աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային արտահայտմամբ գնահատելու համար: Մթնոլորտային օդի աղտոտման հետևանքով տնտեսությանը հասցվող վնասը կազմել է 6300 դրամ, իսկ հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցությունը գնահատվել է 15819906 դրամ:

Նախատեսվել են միջոցառումներ նաև, որոնք ուղղված են՝ հնարավոր արտակարգ իրավիճակներին արդյունավետ հակազդելու և ռիսկը նվազագույնի հասցնելուն:

Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող վնասակար ազդեցությունների համար առաջարկվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր, որում ամփոփվել են տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող գործողություններ/միջոցառումներ, որոնք վերաբերվում են օդի և հողի աղտոտմանը, թափոնների կառավարմանը, կենսաբազմազանության պահպանմանը, առաջացող աղմուկին և թրթռմանը, աշխատանքի անվտանգությանը և այլն: Մշակվել է նաև նախատեսվող գործունեության ազդեցության բնապահպանական և աշխատանքի անվտանգության մշտադիտարկման ծրագիր: Բնապահպանական միջոցառումներն իրականացվելու են կապալառու կազմակերպության կողմից:

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մեղրի համայնքում և Ազարակ բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ստացվել են կարծիքներ ՀՀ ԲՆ համապատասխան տորաբաժանումներից: Ստացված

կարծիքներով և փորձաքննության արդյունքում առաջացած դիտողություններով նախագիծը լրամշակվել է:

Ամփոփելով և վերլուծելով հաշվետվությունում գնահատված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, կարելի է եզրահանգել, որ ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կարող են կրել ժամանակավոր բնույթ և ունենալ կարճատև ազդեցություններ: Նախատեսվող գործունեության իրականացումը Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ համակարգում ունի կարևորություն՝ աշխատանքի հուսալիության, անվտանգության մակարդակի բարձրացման և տարածաշրջանի էներգետիկ համակարգի բարելավման տեսանկյունից:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է՝ պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (հող, ջուր, օդ, սոցիալական միջավայր/ նկատմամբ մշտադիտարկումներ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

2. Ջրօգտագործումը, շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների կուտակումը և հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Ագարակ փ.կ.-ի և 110/35/6 կՎ Ագարակ ենթակայանի միջև կապ 110 կՎ նոր օդային գծի կառուցում>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



Հ. Մկրտչյան